
ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ԹԱԹՈՒԼ ԱՍՈՅԱՆ

Մխիթարյան միաբանության գործունեությունը միշտ էլ գտնվել է հայ հասարակական մտքի ուշադրության կենտրոնում: Կարծիքներ են արտահայտվել և գնահատականներ տրվել ինչպես միաբանության ամբողջ գործունեության, այնպես էլ մասնավոր հարցադրումների առիթով: Միաբանության գործունեությունը լուսաբանող ծավալուն և փոքրիշատե ամբողջական աշխատանքներ են հրապարակել այնպիսի համբավավոր մտավորականներ, ինչպիսիք են Մ. Նալբանդյանն ու Լեոն: Ճիշտ է, նրանց կողմից (նաև Գ. Այվազովսկու, Ալ. Երիցյանի և այլոց) առաջ քաշված և լուսաբանված որոշ հարցեր այսօր ունեն միմիայն պատմական արժեք և էական նշանակություն չունեն միաբանության գործունեության գիտական գնահատման առումով, բայց «ապահովում են» երևույթի լուսաբանման համակողմանիությանը:

Արտահայտված կարծիքները միանշանակ չեն, կան և՛ դրական, և՛ բացասական գնահատականներ: Այստեղ հարկ ենք համարում գոնե համառոտակի ի մի բերել, մեկնաբանել դրանք՝ ավելի շատ ծանրանալով այն հարցադրումների վրա, որոնք որևէ կերպ առնչվում են Մխիթարյանների հայերենագիտական գործունեությանը: Նաև գիտակցաբար չենք անդրադառնա այն ծավալուն ուսումնասիրություններին, որոնք պատկանում են Մխիթարյան հայրերի գրչին (Ստ. Ազոնց, Հովհ. Թորոսյան, Բ. Մարգիսյան և այլք), որովհետև վերջիններս իրենց միաբանության և նրա հիմնադրի ծավալած գործունեությունը դիտում են միայն պայծառ լույսի տակ: Սակայն անմիջապես էլ հարկ ենք համարում ավելացնել, որ նրանց աշխատանքներում կան բազմաթիվ ճիշտ դիտարկումներ:

Ժամանակի ընթացքում շատ բան է ճշգրտվել ու արժևորվել, այսօր կարելի է ասել, որ Մխիթարյանների գործի հանդեպ ծագած տարակարծությունները տարբեր մոտեցումների արդյունք են, որոնք մեծ մասամբ պայմանավորված էին այս կամ այն ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական առանձնահատկություններով: Քիչ չեն այնպիսի գնահատականները, որոնք պարզապես սուբյեկտիվ ընկալման հետևանք են: Փաստ է նաև այն, որ երբ խոսվում է առանձին Մխիթարյանի կամ որևէ

մասնավոր խնդրի մասին, արտա-հայտած կարծիքները, գրեթե առանց բացառության, դրական են, իսկ երբ խոսքը վերաբերում է նրանց գործունեությանն ընդհանրապես, ապա կարծիքները բաժանվում են: Կարծում ենք, որ Մխիթարյաններն ըստ արժանվույն գնահատվում են միայն XX դ. երկրորդ կեսից, համենայն դեպս բարձր է գնահատվում նրանց կատարած աշխատանքը հայագիտության, մասնավորապես հայոց լեզվի ուսումնասիրության բնագավառում: Ցավոք, առ այսօր մեզ մոտ չկա մի այնպիսի ուսումնասիրություն, որտեղ ներկայացվեր, գնահատվեր ու մեկնաբանվեր Մխիթարյանների ավելի քան 300-ամյա հայանպաստ գործունեությունն ընդհանրապես:

Մխիթարյաններին ներկայացնող ու գնահատող առաջին հեղինակը Գ. Այվազովսկին է, որը մեկ տասնամյակից ավելի եղել է միաբանության անդամ և այնտեղից հեռացել է 1856 թ.: Գրքի առաջաբանում, որն ունի «Ուրուագիծ ոգույ և ընթացից Մխիթարեան միաբանութեան Վենետկոյ» վերնագիրը և հրատարակվել է Փարիզում 1857 թ., հեղինակը նշում է, որ միաբանությունից հեռանալով՝ կատարել է եղբոր՝ Հովհաննեսի (Այվազովսկի) ցանկությունը և նրա դրդմամբ էլ գրել է իր գիրքը: «Խնդրեցիր ինձմէ, որ ես էլ... ի գիր անցնեմ Մխիթարեան միաբանութեան հոգին ու սկզբունքները, որոնցմէ բաժնուած ըլլալուս այնչափ ուրախ էիր, քսան տարուան փափագդ վերջապէս կատարուած տեսնելով վրաս»¹, – գրում է նա: Ինչպէս վերնագիրն է հուշում, Գ. Այվազովսկին վերլուծության նյութ է դարձրել Մխիթարյանների հոգևոր ուղղվածությունն ու կենսական սկզբունքները և ավելի շատ շոշափում է մարդկային-բարոյական խնդիրներ: Ասենք, որ նրա առաջ քաշած այս հարցադրումը քննարկման նյութ է դառնում նաև հետագա ուսումնասիրողների կողմից: Գ. Այվազովսկին միմյանց հակադրում է նրանց գործունեության սկիզբն ու վերջը, ցույց տալիս, որ դրանք բարոյականության տեսակետից (սկիզբն ու վերջը), կապվում են վարընթաց ուղիով: «Չէինք ուզեր, կըսեմ, ցուցընել չգիտցողներուն, թէ Մխիթարեան միաբանութեան ոգին ու ընթացքն ալ, որ իր հիմնադրին մտացը մէջ գովելի էին, ինչպէս քիչ ատենէն արուեցան թիրվեցան եւ հետզհետէ այնչափ խոտորեցան իրենց սկզբնական նպատակէն, որ ազգիս հայոց օգտին համար հիմնուած միաբանութիւնը վնասակար ըրին անոր»², – այսպիսի եզրահանգում է կատարում հեղինակը: Նա բարձր է գնահատում Մ. Մեքաստացու գործունեությունը, ասելով, թէ վերջինս ջանացել է, որ հայոց լուսավորությունը տարածվի ոչ թե դրսից, այլ իր մէջ գտնված հանճարների ու շնորհալիների

¹ Գ. Այվազովսկի. Ուրուագիծ ոգույ և ընթացից Մխիթարեան միաբանութեան Վենետկոյ, Փարիզ, 1857, էջ 5:

² Նույն տեղում, էջ 9:

շնորհիվ, որ «իր վախճանին յարմար հանճար ու յօժարություն ունեցող անձինքն միաբանին հետն ու մեր ազգին վերանորոգմանը աշխատին հոգուով ու մարմնով»³: Մխիթարի և նրա աշակերտների կարևոր սկզբունքներից մեկը, Այվազովսկու կարծիքով, այն է, որ նրանք, հարգելով ու ընդունելով լատին միսիոներներին և նրանց ուսումնականությունը, մտքներով չէին էլ անցկացնում նրանց կարգը մտնել: Այն դեպքում, երբ օտարների մեջ ապրելով՝ շատերը կորցրին իրենց ազգային ոգին ու նրանց հարեցին դավանանքով ու սովորություններով այն աստիճան, որ ոմանք նույնիսկ ասում էին, թե «շատ կցաւիւմ, որ Աստուած զիս հայ ստեղծեր է»: Այնուհետև ցույց է տալիս, թե Մխիթարն անգամ գնում էր զիջումների կաթոլիկների ճնշման տակ, բայց բերում է օրինակներ, որ Մխիթարյանները, թեկուզև խիստ վախենալով, այնուամենայնիվ, աշխատում էին պաշտպանել Հայաստանյայց եկեղեցին ու եկեղեցականներին: Իբրև ապացույց նշում է Մ. Չամչյանի «Վահան ուղղափառութեան Հայաստանեայց եկեղեցւոյ» թուղթը, որը պաշտպանում էր հայ եկեղեցու իրավունքները: «Ֆռէնկներէն հեռու. որդեակք, հեռու, մեր խեղճ ազգին տունը քանդողները անոնք են»⁴, – գրել է Չամչյանը: Բերվում են բազմաթիվ օրինակներ, ու ցույց է տրվում, թե ինչպես են ժամանակ առ ժամանակ ամբաստանել Մխիթարյաններին Հռոմի առջև, և վերջիններս ինչպիսի ճիգերի գնով են կարողացել ի չիք դարձնել իրենց գլխին կախված վտանգը: Ըստ Գ. Այվազովսկու՝ կաթոլիկությունը Մխիթարյանների համար սկզբում եղել է որպես դիմակ՝ իրենց գործունեությունն անվտանգ ծավալելու համար, սակայն հետագայում, երբ ընդունում են նոր կանոնադրություն, կաթոլիկությունը դիմակից վերածվում է էության, և Այվազովսկին էլ Մխիթարյանների «սկզբնական ոգու» փոխվելն էլ կապում է սրա հետ: Ոգու փոխվելը բերում է նաև ընթացքի փոփոխություն, որն իր արտահայտությունն է գտնում նոր կանոնադրության մեջ: Ժամանակի ընթացքում փոխվում է ոչ միայն միաբանության ոգին ու ընթացքը, այլև վարքագիծը: Այվազովսկին բերում է փաստերը՝ ցույց տալով, թե ինչ միջոցների էին դիմում միաբաններն իրենց գոյությունը պահպանելու համար: Իր հեռանալն էլ միաբանությունից նա պատճառաբանում է նրանով, որ չի կարողացել հարմարվել կաթոլիկների պայմաններին, որոնք պարտադրում էին հեռանալ Հայաստանյայց եկեղեցուց և դառնալ իսկական կաթոլիկ:

Գ. Այվազովսկին եղել է այդ միաբանության անդամը և ի մոտո ծանոթ է նրա պահվածքին, այնպես որ դժվար է վիճարկել Մխիթարյանների վարքագծի վերաբերյալ նրա նկատառումները: Եվ, ի վերջո, դա այդպես էլ պիտի լիներ, քանի որ օտար հովա-

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 44:

նավորությունը վայելելով՝ հնարավոր չէ երկար ժամանակ պահպանել ինքնուրույնությունը: Բայց մեր կարծիքով՝ կարևորն այն է, որ Մխիթարյանները, այնուամենայնիվ, կարողացել են պահպանել հարաբերական ինքնուրույնություն իրենց նպատակներին հասնելու ճանապարհին: Նրանք, կաթոլիկությունն ընդունելով հանդերձ, ուրիշների նման չեն արհամարհել հայ եկեղեցին, չեն ծավալել կրոնական հողի վրա ազգը մասնատելու քաղաքականություն, խուսափել են քայքայիչ գործունեությունից: Կաթոլիկության դրոշի ներքո հանդես գալն արդեն ենթադրում էր ինչ-ինչ զիջումներ, բայց չենք կարծում, որ դրանք կրոնական, մարդկային բարոյականության աղաղակող խաթարումներ էին, այն էլ այն դեպքում, երբ միաբանության նպատակը հայ ժողովրդին լուսավորության ճանապարհով բարձրացնելն էր: Ժամանակը ցույց տվեց, որ Մխիթարյանները ոչ թե կաթոլիկ քարոզիչներ էին, այլ կրթության, գիտության և մշակույթի անխոնջ մշակներ, որ հայոց համար դժվարին մի ժամանակաշրջանում կարողացան նպատակադրվել և իրագործել ժողովրդին կրթելու անլուծելի խնդիրը: Այս տեսակետից Մխիթարյաններին կարելի է համարել առաջին լուսավորիչներ: Բացի Գ. Այվազովսկուց՝ եղել են նաև ուրիշները, որոնք քննադատական վերաբերմունք են դրսևորել որևէ Մխիթարյանի կամ միաբանության գործունեության որևէ շրջանի վերաբերյալ, սակայն դրանք որքան էլ իրական, այնուամենայնիվ, ընդհանուր պատկերը չեն փոխում:

Ի տարբերություն Գ. Այվազովսկու՝ ավելի լայն ընդգրկում ունի Մ. Նալբանդյանի «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք» աշխատությունը, որը մնացել է անավարտ: Այն տպագրվել է «Հյուսիսսփայլում» 1858 թ. և հարուցել է հասարակական որոշ շրջանների դժգոհությունը, որի հետևանքով էլ Նալբանդյանը նպատակահարմար է գտել դադարեցնել իր աշխատանքի տպագրությունը: Գիտենք, որ բազմակողմանիորեն օժտված այս անհատականությունը XIX դարի 50–60-ական թվականների հայ իրականության առաջնակարգ հասարակական-քաղաքական գործիչն է, որը սերտ կապերի մեջ էր ոռուս հայտնի «60-ականների» հետ (Գերցեն, Օգարյով, Չերնիշևսկի, Բակունին և այլք): Նրա պայքարը նպատակաուղղված էր ազգային առաջադիմությանը:

Ի շարս այլևայլ հարցերի՝ Մ. Նալբանդյանն անդրադարձել է նաև հայոց լեզվի խնդիրներին, գրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերություններին, աշխարհաբարի ձևավորման, կանոնարկման ուղիներին և այլն: Այս ամենի մասին նա խոսում է ոչ միայն վերը նշված աշխատանքում, այլ նաև մի քանի այլ երկերում՝ հաճախ նշելով Մխիթարին և Մխիթարյաններին: Այդ երկերին շատերն են անդրադարձել, ուստի խուսափելով դրանք ծավալուն ու մանրամասն ներկայացնելուց և մեկնաբանություն-

նից՝ կանգ կառնենք այն դիտողությունների վրա, որոնք վերաբերում են վերոնշյալ հարցերին:

Դեռևս 1857 թ. գրված «Յաղագս հայկական մատենագրութեան ճառ» աշխատության մեջ դեմոկրատ գրողն այն կարծիքն է հայտնում, որ գրաբարն արգելք էր դարձել գրականության ու ժողովրդի միջև կապի հաստատմանը, այդ պատճառով էլ այն այլևս չէր կարող ծառայել ժողովրդի լուսավորությանը: Այն դարձավ «քրմանց և մեհենականաց» լեզու, մինչդեռ «ժողովուրդն առհասարակ ըստ հարկին պահանջման բնական ընթացեալ կանոնիք վարեցաւ աշխարհիկ զարդիս կոչեցեալ նոր հայախօսութեամբ,– իսկ այնուհետև ավելացնում է,– թէ և հետզհետէ խառնեալ յայն զփոխառեալս յօտարաց անշքացոյց մինչ իսպառ, և բազում այն է ըստ քաղաքաց և ըստ աշխարհաց կերպարանագործեաց զհնչմունս բառից, մինչև անհասկանալի կացուցանել զլեզուս՝ որոց յայլմէ գաւառէ էին»⁵: Լինելով աշխարհաբարի ջերմ պաշտպան, բնականաբար, Մ. Նալբանդյանն անողորմաբար պիտի խոսեր նրանց մասին, ովքեր պաշտպանում էին գրաբարը, ստեղծագործում նրանով: Այդ պատճառով էլ «Ճառի» քննադատությունն ուղղված էր նաև Մխիթարյանների դեմ: Այլ հարց է, թե Մ. Նալբանդյանը որքանով էր իրավացի այդ հարցում: Այնուամենայնիվ, Մխիթարյանների նկատմամբ նրա դրսևորած վերաբերմունքը միանշանակ բացասական չէ, ավելի շուտ այն բավականին բարդ է ու հակասական:

Մ. Նալբանդյանն իբրև չափանիշ միշտ աչքի առաջ ունի եվրոպական մշակույթը, որի բարձունքներից հայկական միջավայրը երևում էր բավականին աղքատիկ: Ահա, Մխիթարյանների նկատմամբ նրա վերաբերմունքի բարդությունն ու հակասականությունը գալիս են այստեղից. հայ իրականության չափանիշներով Մխիթարյանների արածն իսկապես խիզախում էր, մինչդեռ եվրոպական չափանիշներով նրանց ստեղծած մշակույթը քննադատության չի դիմանում:

Մ. Նալբանդյանը բարձր է գնահատում Սեբաստացուն՝ ասելով, թե հայկական դպրությունը վերստին բորբոքվեց այն կայծից, որ վառեց Մ. Սեբաստացին իր հանձարեղ մտքերի «ծննդականութեամբ»: Շարադրելով վերջինիս ողիսականը՝ Մ. Նալբանդյանը նրա նամակներից քաղված տողերով հաստատում է Մխիթարի հայրենասիրական ձգտումները, որոնցից գերազույնն է եղել «հոգալ ազգի թե՛ հոգևոր, թե՛ իմացական պիտույքը»: Այնուհետև բարձր է գնահատում մի շարք Մխիթարյանների (Ասկերյան, Ավգերյան եղբայրներ, Ինճիճյան, Չամչյան) վաստակը թե՛ ինքնուրույն, թե՛ թարգմանական գրականության բնագավառում: Ըստ Նալբանդյանի՝ Մխիթարյանների շնորհիվ «եվրոպական մարդը այսօր ճանաչում է հայոց ազգը»:

⁵ Մ. Նալբանդյան. Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1980, էջ 10:

Մխիթարյանների գործունեությանը այդպիսի գնահատական տալուց հետո առնվազն տարօրինակ են թվում Մ. Նալբանդյանի այն դատողությունները, որոնք վերաբերում են այդ գործունեության այս կամ այն բնագավառին: Մ. Նալբանդյանի պատկերացմամբ՝ Մխիթարի և նրա աշակերտների խնդիրը միայն հին լեզվի վերակենդանացումն էր. «...առհասարակ այն խնդիրը, որ պիտի լուծաներ Մխիթարյանց միաբանությունը մեր հին դպրության հանդիսում, էր հին լեզվի պահպանությունը և մշակությունը»⁶: Թվում է, թե խոսքը վերաբերում է միայն հին դպրությանը, բայց հետագա շարադրանքում Նալբանդյանը Մխիթարյանների գործի խորհուրդը հենց դրանում էլ տեսնում է՝ մի տեսակ նեղացնելով նրանց արածի սահմանները: Մխիթարյաններին պահելով հին դպրության սահմաններում՝ նա անում է այնպիսի եզրակացություն, որը պատմականորեն չի արդարացվում: «Ընդհանուր լուսավորություն տարածել մեր ազգի մեջ, նորա գործը չէր, և նա բոլորովին ապարդյուն գտնվեցավ»⁷, – գրում է նա: Ակամա հարց է առաջանում. «Եվրոպական մարդն այսօր ճանաչում է հայոց ազգը» Մխիթարյանների՝ գրաբարը վերակենդանացնելու և ընդհանուր լուսավորություն տարածելու ապարդյունության ն շնորհիվ: Ակնհայտ թերագնահատում է, բայց նրա կարծիքով՝ դա ճշմարտություն է, այդպես էլ պիտի լիներ, որովհետև «մինչև այսօր չի երևեցած դոցա մեջ մի ուսումնական անձն եվրոպական բազմակողմանի և տիեզերական կրթությամբ»: Այս հանգամանքն էլ նա կապում է Մխիթարյանների պապականության հետ:

Մ. Նալբանդյանը Մխիթարյանների մոտ նկատում է գործի և խոսքի հակասություն և իբրև օրինակ՝ բերում է Մ. Չամչյանին, որը խոսքով հայ եկեղեցու հետ է, իսկ գործով (նկատի ունի նրա «Հայոց պատմությունը»)՝ պապականության: «Ասածներիս ապացույցը երևում է նրա մի քանի ձախ ու ծուռ պատմաբանական գրքերից, որ բոլորովին հարմարված են պապականության օգտին. այդպիսի գրքերի կարգում են և Չամչյան «Հայոց պատմութիւն» ասված հատորները..., ուր հայոց կաթողիկոսքը եպիսկոպոսքը անդադար հպատակության թղթեր են գրում Հռովմի պապին»⁸:

Այսպիսով, ընդհանրապես բարձր գնահատելով Մխիթարյանների գործունեությունը, քննադատում և թերագնահատում է նրանց դպրոցների, ստեղծած գիտական ու գրական արժեքների դերը հայ հասարակական կյանքում: Եվ անմիջապես էլ ընդունում է, որ «տպագրությունը ևս հասնելու չէր այն կատարելության աստիճանին, ինչ աստիճանի հասավ Մխիթարյանց հոգաբարձությամբ»: Կարծում ենք՝ ճիշտ է գրակա-

⁶ Նույն տեղում, էջ 271:

⁷ Նույն տեղում, էջ 271:

⁸ Նույն տեղում, էջ 273:

նագետը, որ գրում է. «Տվյալ դեպքում Նալբանդյանին, որը կլանված է ժամանակի հրատապ հարցերով, դավաճանել է պատմականության նրան հատուկ զգացումը»⁹:

Սկզբունքայնությամբ Մ. Նալբանդյանի համար Մ. Սեբաստացին ավելի բարձր է կանգնած, քան նրա աշակերտները: Այս տեսակետից նա կարծես շարունակում ու զարգացնում է Գ. Այվազովսկու գաղափարները: Հիշենք, որ վերջինս կաթոլիկությունը Մխիթարի և նրա աշակերտների համար համարում էր դիմակ: «Մխիթարը պապականությունը դրեց յուր երեսին որպես դիմակ, նրա ապագայքը ծնանում են դիմակով, բայց հայկական դիմակով: Մխիթարի արտաքինը՝ պապականությունը, դառնում է նոցա համար ներքին, Մխիթարի ներքինը՝ հայությունը, դառնում է արտաքին, մի լոկ դիմակ, որով երևում են միմիայն հայոց ազգի առջև»¹⁰: Քննադատական ոգին, որ այս դեպքում դառնում է ինքնանպատակ, այնքան խորն է Մ. Նալբանդյանի մոտ, որ ժողովրդի անունից Մխիթարյան միաբանությունն անվանում է «հերձվածոդական կենտրոն», որի ծավալած լուսավորական գործունեությունն առաքելություն չէր, այլ բնութամենը ցուցադրանք:

Եթե Սեբաստացին կրոնական բարոյականությամբ ավելի սկզբունքային է, քան իր հաջորդները, ապա վերջիններս էլ ավելի գրագետ ու զարգացած են, քան իրենց միաբանության հիմնադիրը: Չարմանալիորեն Մ. Նալբանդյանը շրջանցում է Մխիթարի լեզվագիտական գործունեությունը: Գնահատելով նրա կամքը, համառությունը, կայունությունն ու նվիրվածությունը իր սկսած գործի նկատմամբ՝ Մ. Նալբանդյանը և ոչ մի անգամ չի հիշատակում նրա անձնական ներդրումը հայագիտության ձևավորման ու զարգացման մեջ: Ընդհակառակը, ամեն ինչ վերագրում է «Մխիթարյանց հոգաբարձությանը», իսկ Մխիթարի մասին գրում է. «Ինքը՝ Մխիթարը, չէր կարող համարվիլ մեծ պտղաբեր հեղինակ այս վերստին նորոգության (խոսքը վերաբերում է գրարարի ուսումնասիրությանը – Ա. Թ.), որովհետև նա չէր ստացել ոչ այն դաստիարակությունը և ոչ ունեցել էր ճանապարհ ուսումնասիրելու հին լեզվի հիշատակարանքը, որ նորա աշակերտքը հետզհետե ձեռք բերելով՝ սկսեցին ուսումնասիրել երկաթի համբերությամբ ու անձանձիր աշխատելով»¹¹: Դեմոկրատ գրողի համար Մխիթարը «ինքնացյալ ուսումնական չէր, այլ ցանկացող լոկ ուսման»:

Ակնհայտորեն Մ. Նալբանդյանը նսեմացնում է Սեբաստացու դերը հայ գրապատմական գործընթացում: Ճիշտ է, վերջինս իր հաջորդների նման կանոնավոր կրթություն չէր ստացել, բայց շնորհիվ բնական օժտվածության՝ սկիզբ դրեց գրարարի մաքր-

⁹ Մ. Դ ա թ ն յ ա ն. Մ. Նալբանդյան. կյանքը և գործունեությունը, Երևան, 1979, էջ 113:

¹⁰ Մ. Ն ա լ բ ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 276:

¹¹ Նույն տեղում, էջ 270:

մանն ու մշակմանը, բառարանագրությանը, աշխարհաբարի քերականությունների ստեղծմանը և այլն:

Մխիթարյաններին գրաբարի ուսումնասիրության շրջանակներում սահմանափակելով՝ Մ. Նալբանդյանը միաժամանակ իմաստագուրկ է համարում այդ աշխատանքը, որովհետև հայոց համար առաջին պահանջելին «պիտի լեզու այլ, նոր և կենդանի լեզու աշխարհիկ, շինեալ և մշակագործեալ հեղինակացն ջանիւք իբրև գործարան ազգային լուսաւորութեան»¹²: Հայ մանուկը կարոտում է հասկանալի լեզվի, որով նա կարող է սովորել նաև հին լեզուն, մինչդեռ «բազումք ի կամակոր հնամուլաց» փորձում են «հնովն զհինն ուսուցանել, որ է մեռելութեամբ զմեռելութիւն ի կեանս հրաշագործել»: Այս ընդհանուր մեղադրանքը, իհարկե, մեծ մասամբ ուղղված է նաև Մխիթարյաններին: Մ. Նալբանդյանը անտեսում է Մխիթարյանների՝ աշխարհաբարի միջոցով գրաբարն ուսուցանելու գործնականում արտահայտված ջանքերը:

Մխիթարյանների նկատմամբ ունեցած իր նկատառումները Մ. Նալբանդյանն արտահայտել է և՛ «Յադագս հայկական մատենագրութեան ճառ», և՛ «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք» աշխատություններում, ընդ որում առաջինում արտահայտած մտքերը, փոքր-ինչ ընդարձակելով ու մանրամասնելով, կրկնում է երկրորդում: Բոլոր դեպքերում Նալբանդյանի դիրքորոշումը Մխիթարյանների և հատկապես Մխիթարի նկատմամբ ոչ միայն հակասական է, այլև շատ դեպքերում անարդարացի, իսկ քաղաքական բնույթի երկերում Մխիթարյանները հանդես են բերված իբրև հետադեմ գործիչներ: Մխիթարյանների նկատմամբ համեմատաբար օբյեկտիվ ու բարյացակամ վերաբերմունք է դրսևորում Ալ. Երիցյանն իր «Վենետիկի Մխիթարյանք» գրքույկում (Թիֆլիս, 1883 թ.): «Կա՞յ արդյոք գրագէտ հայ, որին ծանօթ չլինի Մխիթարեանց միաբանութեան անունը: Կա՞յ բանասէր ազգային, որի ձեռքին չգտնուեն վենետիկցոց հրատարակութիւնները: Կա՞յ, վերջապէս, մի այլ հիմնարկութիւն, որով աւելի կարողանայինք պարծենալ լուսաւորեալ աշխարհի առաջ այս վերջին 150 տարուայ ընթացքում, – գրում է Երիցյանը և այնուհետև թվարկում այն տեղաշարժերը, որոնք կատարվել են հայագիտության մեջ Մխիթարյանների կողմից, – Այո՛, Մբ. Ղազարու վանքը առաջինը եղաւ, որ ծանօթացրեց Եվրոպային հայագիտութեան հետ: Նա եղաւ, որ լոյս աշխարհ բերեց մոռացութեան տուած հայ ձեռագիրները, նա եղաւ, որ նպաստեց աշխարհաբարի առաջ գալուն (= ձևավորվելուն, մշակվելուն – Ա. Թ.) և, վերջապէս, նա եղաւ, որ վարժեցրեց հայերիս գիրք գնել, գիրք կարդալ, գիրք պահել»¹³: Սակայն Ալ. Երիցյանը այդ փառքը վերագրում է «աւելի անցեալին, քան թէ նորա ներկա-

¹² Նույն տեղում, էջ 41:

¹³ Ալ. Երիցյան. Վենետիկի Մխիթարյանք, Թիֆլիս, 1883, էջ 34:

յին», ի տարբերություն Մ. Նալբանդյանի, որը պնդում էր, թե միաբանության փառքը ապահովեցին Մխիթարի հաջորդները: Այդքան ճշմարիտ դիտողություններ անելուց հետո, այնուամենայնիվ, Ալ. Երիցյանը կարծում է, որ «Մբ. Ղազարու վանքից դեպի մեզ տարածուած լոյսը առանց խաւար բծերի չէ», և նորից արծարծում է Մխիթարյանների կաթոլիկության խնդիրը, որ սկիզբ էր առել Գ. Այվազովսկուց: Առանձին-առանձին արժևորելով Մխիթարյանների գիտագեղարվեստական ժառանգությունը՝ Երիցյանն այն եզրակացությանն է հանգում, որ վենետիկցիների մատուցած ամենամեծ ծառայությունը ազգին «գլխաւորապէս նորա լեզուագիտական աշխատութիւններն են», և անմիջապէս էլ վերապահում է անում, որ այդ բնագավառում նրանք գրեթէ մեկ ամբողջ դար ետ են մնացել «բուն լեզուագիտական զարգացումից», որովհետև «նոքա ծանօթ չեն համեմատական լեզուագիտութեան հետ, չեն տուած ոչ հայոց և ոչ օտար լեզուների պատմութիւնը, նոքա չեն ուսումնասիրած սանսկրիտը, զենդը, պահլաւը և ֆարսին: ... Հին լեզուներից վենետիկցիք ընտրած են յունաց և լատին լեզուները»¹⁴:

Քննադատական այսպիսի դիտողություններից հետո, այնուամենայնիվ, Ալ. Երիցյանը ընդունում է, որ «վենետիկցիք իրենց ջանքով մեծապէս նպաստեցին հայկաբանութեանը. գանք հիմա հայոց լեզուի ուսումնասիրութեանը, որի մէջ է իրաւամբ վենետիկցոց փառքն ու պարծանքը: Չգիտենք, թէ ո՞ր աստիճանի զարգացման մէջ կլինէր այսօր այդ առարկան, եթէ Մխիթարի հիմնարկութիւնը այնքան արդիւնաբեր չգտնուէր այս ճիւղում»¹⁵, – եզրակացնում է նա:

Թերևս կարելի է ընդունել Ալ. Երիցյանի այն դիտողությունները, որոնք վերաբերում են արևելյան հին ու նոր լեզուների ուսումնասիրությանը: Մխիթարյաններն ավելի շատ կողմնորոշվում են դեպի արևմտաեվրոպական լեզուները: Ճիշտ է նաև այն, որ նրանք չեն հետաքրքրվել համեմատական լեզվաբանության հարցերով, չեն գրել հայոց և այլ լեզուների պատմությունը: Բայց այս հարցադրումներին էլ կարելի է մոտենալ միայն մեծ վերապահությամբ: Նախ՝ չի կարելի մեղադրել մեկին նրա համար, որ ուսումնասիրել է այս լեզուն և ոչ այն, և երկրորդ՝ պատմահամեմատական լեզվաբանությունն իր հիմնական գծերով նոր-նոր ձևավորվում էր XIX դ. առաջին կեսին, և լեզվաբանությունն ընդհանրապես ընդհուպ մինչև XVIII դ. վերջերը ինքնուրույն գիտություն էլ չէր, այլ զարգանում էր հարակից գիտությունների ընդերքում: Եվ, ի վերջո, պետք է հաշվի առնել նաև այդ բնագավառում կուտակված նյութերի հետ շփվելու

¹⁴ Նույն տեղում, էջ 111:

¹⁵ Նույն տեղում, էջ 34:

դժվարությունը: Չնայած սրան՝ Սեբաստացու մոտ արդեն կան լեզուների համեմատականության տարրեր, որոնք վերաբերում են բառային ոլորտին¹⁶:

Մխիթարյանների գործունեությանն անդրադարձել է նաև Լեոն¹⁷: Նրա ուշադրության կենտրոնում հայ տպագրության հարցերն են՝ սկսած XVI դարից, և միաբանության գործունեությունն էլ ներկայացվում է այդ տեսակյունից, սակայն Լեոն անդրադառնում է նաև նախորդ հեղինակների կողմից բարձրացված հարցերին՝ հաճախ տալով յուրովի պատասխաններ: Նա ընդունում է, որ իր հիմնադրման օրվանից մինչև XIX դ. կեսերը Մխիթարյան միաբանությունը «միակ հիմնարկությունն էր, որ լույս ու գիտություն էր մատակարարում հայերին»: «Մի անօրինակ բեղմնավոր գրական գործունեությամբ Սբ. Ղազարի վանքը դարձավ մի երևույթ, որի նմանը չէր տեսել մեր պատմությունը: Հայերը շատ տեղեր էին աշխատում ծաղկեցնել մայրենի գրականությունը, բայց ոչ մի տեղ չկարողացան հավասարվել Վենետիկի հայ կրոնավորներին, որոնք երկար ժամանակ անհաղթելի և աննկուն տիտանների նման էին երևում ազգի աչքին»¹⁸, – գրում է նա: Ինչ վերաբերում էր կաթոլիկության հարցին, Լեոն Մխիթարին համարում է կաթոլիկ, միաժամանակ ասելով, որ դա հանցանք չէ և դրանով հանդերձ կարելի է լինել նաև լավ հայ:

Լեոն Մխիթարյանների գիտական, գրական արտադրանքը գնահատում է արևմտաեվրոպական մշակույթի չափանիշներով՝ համեմատության մեջ դնելով երկու տարբեր իրողություններ: Ինչպես տեսանք, այդպես էր վարվում նաև Մ. Նալբանդյանը: Ըստ Լեոյի՝ վանականության «անբավական տարրերը» հեռանում էին հայրենիքից և հաստատվելով Եվրոպայում՝ ծավալում բեղմնավոր գործունեություն: Ազգի կրթության գործը վանականությունը երկար ժամանակով վերցնում էր իր ձեռքը, որը Լեոն համարում է «հետադիմություն և դժբախտություն աշխարհական այն լուսավոր գիտության տեսակետից, որ ողողել էր ամբողջ արևմտյան աշխարհը»: Ասվածը վերաբերում էր նաև Մխիթարյան միաբանությանը, որովհետև Լեոյի կարծիքով՝ այն հայ վանականության գերագույն զարգացումն է: Լեոն հակասում է ինքն իրեն. ստացվում է, որ «լույս ու գիտություն մատակարարող, մայրենի գրականությունը ծաղկեցնող աննկուն ու անհաղթելի տիտանները» միաժամանակ ազգի համար «հետադիմություն են և դժբախտություն»: Գնահատականի մեջ միտում կա. բանն այն է, որ Լեոյի կարծիքով՝ վանականությունը, այդ թվում՝ Մխիթարյան միաբանությունը, կարող էր ծաղկեցնել աստվածաբանությունը և հրապարակ հանել կրոնական բնույ-

¹⁶ Տե՛ս Վ. Պե տր ո սյ ա ն. Մ. Սեբաստացու լեզվաբանական ժառանգությունը, Երևան, 1994:

¹⁷ Տե՛ս Լ. Ե. Ն. Հայկական տպագրություն, Թիֆլիս, 1902:

¹⁸ Լ. Ե. Ն. Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1986, էջ 360:

թի գրքեր: Նման մոտեցման պատճառը վանականության նկատմամբ ժամանակի ընթացքում ձևավորված բացասական վերաբերմունքն էր: Ըստ երևույթին, Լեոյի անաչառ լինելուն խանգարել է հարցի քաղաքականացումը, վանականության, մասնավորապես Մխիթարյանների գործունեությունը հասարակական-քաղաքական հոսանքների ու նրանց գաղափարախոսությունների հաշվառմամբ գնահատելը, մի բան, որ բավականին նկատելի էր նաև Մ. Նալբանդյանի մոտ: Ուզում ենք փաստել, որ Մխիթարյանների պարագայում հասարակական-քաղաքական պահպանողականությունը լուրջ խոչընդոտ չի եղել հայագիտությունն ու հայ մշակույթը զարգացնելու համար:

Լեոն միաբանության «հետադեմ պահպանողական» նշան է համարում այն, որ նա իբրև գիտական, գրական գործունեության լեզու ընտրեց «ոչ թե ժողովրդի լեզուն, այլ անհասկանալի, մեռած գրաբարը»: Հայոց համար XVIII դ. մշակութային վերածննդի դար է, սակայն այն Լեոն համարում է «մեռած ծնունդ», որովհետև այն ժողովրդին չէր ներկայանում հասկանալի լեզվով: Չնայած արևմտահայ աշխարհաբարը գրքի լեզու դարձնողներից առաջինը Սեբաստացին է, Լեոն, այնուամենայնիվ, նրան մեղադրում է անհամարձակության մեջ: «Եվ այսպիսով գրաբարը դարձավ Մխիթարյանների կուռքը: Երկար ժամանակ այդ նորոգած, ոսկեզօծած հնությունը տիրում էր մեզ վրա, որովհետև այդպես էր կամենում Մբ. Ղազարի վանքը¹⁹», – գրում է նա: Սա հանիրավի մեղադրանք էր՝ ուղղված մի կազմակերպության, որը աշխարհաբարի կիրառման ու մշակման առաջամարտիկն էր XVIII–XIX դարերում: Այնուամենայնիվ, Լեոն բարձր է գնահատում Սեբաստացու «Հայկազյան բառարանը»՝ այն համարելով դարագլուխ կազմող հսկայական գործ:

Լեոյից հետո Մխիթարի և նրա հիմնադրած միաբանության մասին ամբողջական ուսումնասիրություններ հրապարակ չեն իջել, սակայն հայերենի և հայ գրականության տարբեր հարցերի վերաբերող աշխատանքներում, ըստ անհրաժեշտության, հեղինակներն անդրադառնում են նաև դրանց: Մխիթարյանների հայերենագիտական աշխատանքներին անդրադարձել են Հ. Միրունին, Բ. Կյուլեսերյանը, Ալպոյաճյանը, Աշ. Հովհաննիսյանը, Ա. Կարինյանը, Ա. Աբրահամյանը, Է. Աղայանը, Գ. Ջահուկյանը, Հ. Բարսեղյանը, Ռ. Իշխանյանը, Գ. Գասպարյանը և ուրիշներ: Պետք է ասել, որ XX դ. 2-րդ կեսին գնահատականներն ավելի օբյեկտիվ են դառնում: Նկատելի է երևույթների մեջ խորանալու, դրանք պատմականորեն արժևորելու, տրված գնահատականները ճշգրտելու ձգտումը: Ճիշտ է, հասարակական-քաղաքական իրավիճակի վրա զգալի էր կուսակցական գաղափարախոսության աննպաստ ազդեցությունը

¹⁹ Նույն տեղում, էջ 378:

(հասկապես 30–50-ական թվականներին), սակայն հետագայում հասարակական միտքն աստիճանաբար ազատագրվում է այդ ազդեցությունից և դառնում ավելի իրատեսու ճշմարտացի: Բնականաբար, այդպիսի մթնոլորտում անհնար էր խուսափել խեղաթյուրումներից, որոնցից զերծ չի մնում նաև Մխիթարյանների գործունեությունը: Այս առումով առանձնանում են Ալ. Մարգարյանի ուսումնասիրությունները՝ նվիրված Մ. Նալբանդյանի և Խ. Աբովյանի լեզվագիտական հայացքներին²⁰: Քաղաքական գաղափարախոսության ազդեցությունն այնքան ուժեղ է արտահայտված հասկապես Մ. Նալբանդյանին նվիրված ուսումնասիրության մեջ, որ հեղինակը, գուցեև ակամա, խեղաթյուրում է Մխիթարյանների գործունեության հետ կապված որոշ փաստեր: Մրան նպաստում է այն, որ նա անվերապահորեն ընդունում է Մ. Նալբանդյանի՝ շատ դեպքերում, ինչպես տեսանք, ոչ ճիշտ ու հակասական դատողությունները նրանց մասին: Թյուրիմացությունները բխում են XIX դ. հասարակական-քաղաքական միտքը հոսանքների բաժանելու և առաջադիմական կամ հետադիմական քաղաքական հայացքներ ունեցող գործիչներ տարբերակելու միտումներից: Ի վերջո, Ալ. Մարգարյանը Մխիթարյաններին անվանում է գրաբարյաններ, որոնց հայացքները լեզվի, աշխարհաբարի, գրաբարի ու նման հարցերի վերաբերյալ ունեն «ռեակցիոն» բնույթ: Ըստ հեղինակի՝ գրաբարը հոգևորականության ձեռքին ժողովրդին «ճնշելու և կեղեքելու» միջոցներից մեկն է եղել:

Այսպիսով, Մխիթարյանների մասին շատերն են խոսել, նրանց գիտական, գեղարվեստական ժառանգության մասին արտահայտել հակասական կարծիքներ: Կամ իդեալականացրել են նրանց գործունեությունը, կամ Վենետիկն ու Վիեննան համարել են ռեակցիայի բույն: Սակայն կարևորն այն իրողությունն է, որ լուրջ ուշադրություն է դարձվում նրանց հայերենագիտական գործունեությանը: Մխիթարյանները թե՛ գրաբարի, թե՛ աշխարհաբարի հարցերին անդրադարձել են ամենայն բարեխղճությամբ ու պատասխանատվությամբ և, որ ամենակարևորն է, գիտականորեն՝ հաշվի առնելով ժամանակաշրջանի պահանջները, հասարակության և լեզվի զարգացման միտումները: Ի վերջո, եթե նկատի ունենանք այն ներդրումը, որ նրանք ունեցան գրաբարի վերակենդանացման, այն հայերենին խորթ լեզվատարրերից մաքրելու, գրաբարի միջոցով աշխարհաբարի բառապաշարը հարստացնելու ոլորտներում՝ միննույն ժամանակ դառնալով արևմտահայերենի առաջին կիրառողները, մշակողներն ու նորմավորողները, ապա պարզ կլինի, թե ինչպիսի հսկայական նշանակություն է ստանում հայագիտության մեջ նրանց գործունեությունը:

²⁰ Տե՛ս Ալ. Մարգարյան. Մ. Նալբանդյանի լեզվագիտական գործունեությունը, Երևան, 1957, նույնի՝ Խ. Աբովյանը և աշխարհաբարը, Երևան, 1958:

ДЕЯТЕЛЬНОСТЬ МХИТАРИСТОВ В ОЦЕНКЕ АРМЯНСКОЙ ОБЩЕСТВЕННОЙ МЫСЛИ

ТАТУЛ АСОЯН

Резюме

Деятельность Мхитаристов всегда находилась в центре внимания армянской общественной мысли. Высказывались разные мнения, и даже такие авторитетные мыслители, как М. Налбандян и Лео, не дали ей однозначной оценки. Из выдвинутых вопросов можно выделить вопросы религиозной принадлежности Мхитаристов, отношение к грабару и ашхарабару. Исследования показывают, что Мхитаристы сыграли особо важную роль в арменоведении и внесли неоценимый вклад именно в эту сферу.

ESTIMATION OF THE ARMENIAN PUBLIC THOUGHT OF THE MKHITARISTS' ACTIVITIES

TATUL ASOYAN

Summary

The activities of the Mkhitarists has always been in the centre of Armenian public thought. Even such authorized writers, as M. Nalbandyan and Leo, did not have any certain answer to that question. Among the questions raised, one can underline the question of the religious affiliation of the Mkhitarists and their concern to Grabar (Old Armenian) and Ashkharhabar (New Armenian). The Mkhitarists played an important role in the study of Armenology, and made an inestimable contribution to this area.